

Արդարեւ շատ դժնդակ էր Հայ Ազգին վիճակը հայաշատ պաւստոսներուն մէջ, ուր յաճախողէպէ՛ն կոտորածը, սոսն ու վարակիչ հիւանդութիւնները՝ պատերազմի ընթացքին, պատերազմներէ ետք, ցեղախուժբերու արշաւանքներուն ժամանակ (6) :

Գրիգոր Աբեղայ սգալով այս տխուր դէպքերը կ'ըսէ . «Անրարի ժամանակի վիճակեցաք . չորրորդ մասն աշխարհիս ապակոնեալ է ի բազում հինից այլազգեաց : Անտէրունջ է ամենայն աշխարհ . ամենեքին իրբեւ ոշխարք մոլորեալք, որոց ոչ հովիւ է տածիչ եւ ոչ մխիթարութիւն ուստեք եւ ոչ որ ժողովէ զցրուեալս ի մի . յամենայն կողմանց նեղութիւն պատեալ է զմեօք . եւ ահա վճարեալ է բանն Եսայեայ . ահ, դուք եւ որողայթ ի վերայ ձեր, բնակիչք երկրի» (7) :

Այս խղճալի պատկերն ամբողջացնելու համար հարկ է նկատի առնել պետական խժդժութիւնները, անհատնում հարկերն ու տուրքերը, թալանն ու հարստահարութիւնները, կաշառքն ու պարտադրուած նուէրները, մահմետականացումի անուղղակի ջանքերը նաեւ օրէնքի հիման վրայ . այսպէս իմամ Ջաֆարի օրէնքով քրիստոնեայ մը մահմետական կրօնքն ընդունելով, միա՛հ իրաւական ժառանգորդը կը հանդիսանար իբր

---

(6) Իրագեկ . Հայրենիք Ամսագիր, Գ . Տարի, Թիւ , 3, Յունուար 1928 հատոր Զ . էջ 88-89 :

(7) Զամչեան, Գ . 536 :